



Վանո Սիրադեղյան

«Օսկարից» Մինչև իշու Սպարտակիադա

Բավական էր դուրս գային Բաքվի վերահսկողությունից, բավական էր նաև ձերբագրվելին Տեր-Պետրոսյանի զգաստացնող ներկայությունից, անմիջապես վերադարձան ավանակային կրոսին: Վերջում: Իսկ ամենասկզբում Նոբելյան մրցանակ «կայցնելու» գործն էր դարաբաղցի Արտեմի համար, հետո՝ առերեսույթ «ազգափրկիչ» «Արմենիբումը», իսկ, ըստ էության, փող լվալու «պրոեկտ» ու նարկոտիկ սինթեզելու մեդիատանիք, ինչի շրջանակներում էլ բանտ նստեցրին Գագիկ Ներսիսյանին, որպեսզի այդ գործում հանկարծ մրցակից չլինի, քանի որ «Նաիրիտն» էլ այդ հնարավորությունը ունի:

Հետո հերթը հասավ «Օսկար» «ստանալուն» եւ երբ այդ էլ անցավ, վրա հասավ Կաննի կինոփառատոնը, բայց այստեղ էլ պարզվեց, որ Ֆրանսիան ոչ այնքան հակաթուրք է, որքան արաբական տեռորով հիացող (համենայնդեպս, դա թույլ է տալիս բազմաթվանդակ դարձնել Ֆրանսիայի՝ մարքսիզմից օրգազմի հասնող մտավորականության ազատ ժամանցը) եւ Կաննում ինչ-որ մրցանակ տվին պաղեստինցիների նկարահանած (թե՛ ֆրանսիացիների) առաջին ֆիլմին: Եւ դարաբաղցիք, որ այսպիսի ելքը կանխատեսել էին, Կաննի փառատոնին զուգահեռ ծրագրել էին էշերի մրցում Ստեփանակերտում, որպեսզի կոտր չընկնի հայ ազգային ոգին: Անհնար է պատկերացնել, որ Վեգիրովը կամ Ալիեւը թույլ տային էշերի մրցում անցկացնել Ադրբեջանի տարածքում, առավել եւս՝ ցուցադրել այն հեռուստատեսությամբ: Առավել եւս բացառված էր, որ նրանց թույլ տրվեր հեռուստախցիկների առաջ այդ աստիճան ինքնադրսեւորվել այն ժամանակներում, երբ Հայաստանում հայկական իշխանություն կար: Ինչ մեղքս թաքցնեմ, թեթեւակի կասկածներ ունեմ, որ «Ա1+»-ի փակելն էլ հարմարեցված

Էր Էշերի սպարտակիադային, որպեսզի ազատ հեռուստաալիքը «սխալ
ռակուրսով» ցույց չտար այդ տոնը: Չնայած, ինչ ռակուրսով էլ ցույց տաս, Էշը
մնում է Էշ: Իշի ռակուրսը ո՞րն է: Իհարկե, գվարճալի կլիներ այս ամենը, եթե
այսքան չարագուշակ չլիներ:

Իշխանությամբ, բանակով, ոստիկանությամբ, դատարաններով զինված
անուղեղների մի խումբ տեսախցիկների առաջ գվարճանում է չորքոտանի մի այլ
երամակի հետ եւ կարծում է, թե եթե իջար իշին խրախուսելու մակարդակին,
ուրեմն ժողովրդավար իմիջդ ապահովված է: Ավելին՝ կարծում է դա օրիգինալ
է: Այնինչ, անծայրածիր Ասիայից մինչեւ Հարավային Ամերիկա (ներառյալ
Աֆրիկան, Եվրոպայից՝ Բալկաններն ու Իսպանիան) մեզ նման թշվառ
ժողովուրդների կյանքում Էշը մինչեւ հիմա անփոխարինելի դեր ունի: Էշը
ապրում է անգամ Ատլանտյան օվկիանոսում, Աֆրիկայի եւ Հարավային
Ամերիկայի միջեւ ընկած անտերուդուս Կապո Վերդե տառացիորեն բուսագուրկ
կղզիներում: Պիտի լավ պատկերացնել իշու եւ մարդու կապվածության ողջ
խորությունը՝ հասկանալու համար, թե ինչու են կղզիաբնակները Էշ պահում մի
տեղ, որտեղ ոչ ծառ կա, որ անտառից փայտ կրեն, ոչ հանդ ու հողամաս ունեն,
ուր Էշով գնան-գան եւ անասունի կերն էլ երեւի ներմուծում են (հո չի կարելի
կարծել, որ Էշը ձուկ է ուտում): Պատկերացրեք, որ այստեղ էլ Էշին պատշաճ
գբադմունք են գտել ձկնորսների երեխաները՝ սակավ ջրհորներից խմելու ջուր են
կրում իշին բարձած՝ ամենավերջին հայկական գյուղի երեխաների նման: Մի
խոսքով, ինչ աստիճան Էշն է տարածված, նույնքան տարածված են Էշի, աքլորի,
շների եւ այլ կռիվները: Մի տարբերությամբ, սակայն, որ այդ երկրներում Էշի
հետ առնչվելը չեն ներկայացնում որպես ազգային առանձնահատկություն,
առավել եւս՝ ժողովրդին մոտ լինելու ապացույց: Էլ չեն ասում, որ իշով
խանդավառվելուց գատ, այդ երկրներում նաեւ աշխատում եւ արտադրանք են
տալիս:

Անուրանալի է ավանակի դերը քաղաքակրթության պատմության, հատկապես՝
մատաղ սերնդի սեռական դաստիարակության գործում: Հասկանալի է հասուն
տղամարդու ձգտումը ժամանակ առ ժամանակ, այս կամ այն կերպ, այս կամ
այն չափով քողարկված, արժանին մատուցել իր խռովահույզ պատանեկության
սինվոլներին, բայց դեռ երբեք այդ բանը այդքան «պետականորեն», այդչափ

անթաքույց ու սրտանց չէր դրսևորվել, ինչպես դրսևորեցին Ղարաբաղի ու
Հայաստանի պետերը այդ իշու սպարտակիադայի ժամանակ: Չէ,
իշխանությունը չար կատակներ է անում ախմախ մարդու հետ: Ելնելով այն
փաստից, որ «կարաբախսկի ռենեսանսը» սկսվեց սպիդի դեդի մասին
գառանցանքից եւ վերջացավ Էշի սպարտակիադայով, չես կարողանում
ազատվել կաչուն-միստիկ այն մտքից, թե այս ամենը գուցեւ պատահական չէ:
Թե կարող է հանկարծ պարզվել, որ սպիդը ոչ թե այծից կամ կապիկից է անցել
մարդուն, այլ սովորական Էշից. չէ՞ որ մատաղ սերնդի սեռական
դաստիարակության գործում Էշի դերը անհամեմատելի է այլ կենդանիների հետ,
եթե իրար հետ համեմատելու լինենք, մանավանդ, կապիկների կապրիզնի
բնույթը, այծերի պլստան ճարակությունն ու Էշի անդիմադիր խասյաթը: Ոչ մի
համեմատություն: Եւ պետք չէ Էշի պրինցիպիալ համառությունը խառնել նրա
անխտրական վարքի հետ: Եւ եթե այս տեսանկյունից նայենք խնդրին,
ինքնըստինքյան հասկանալի է դառնում, որ սպիդով նախագահներից պիտի
գբաղվեին Հայաստանի, Նիգերիայի, Քրդստանի, Վենեսուելայի կամ
Տաշիկստանի ղեկավարները: Եթե նրանց խելքը չի հասել, դա չի նշանակում, որ
Քոչարյանի խելքն էլ չէր հասնելու: Ով իր կողքին Ջորի Բալայանի նման
իդեոլոգ ունի, որը նաեւ բժիշկ է եղել ժամանակին: Բայց լուրջ, ո՞վ կսպասեր, որ
88 թվականի ազգային ինքնագիտակցության գարթոնքը այսպիսի գարգացում
կունենա:

30.08.2002